ԾԱՑՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՆԵՐԱԼԻՍՍԻՄՈՒՍ ՍՏԱԼԻՆԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՈՒՅՑԻԱՅԻ 30-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄՈՍԿՎԱ

ԿՐԵՄԼ

ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

Հայ Եկեղեցու հավատացյալ ժողովրդի, ողջ հոգեվոր դասի եվ Մեր իսկ անունից ի խորոց սրտի շնորհավորում ենք Հոկտեմբերյան Մեծ Ռեվոլուցիայի պանծալի 30-ամյակը: Հոկտեմբերը սկիզբ դրեց համաշխարհային պատմության մեծագույն դարաշրջանի, ի լուր աշխարհի հայտարարեց եվ հերոսաբար կենսագործեց աշխատանքի լիակատար ազատագրման, ազգերի ինքնորոշման, ժողովուրդների եղբայրության, արդարության թագավորության, գիտության տիրապետության, միջազգային խաղաղության եվ այլ վեհագույն գաղափարների:

Հոկտեմբերյան Մեծ Ռեվոլուցիան հայտարարեց եվ հանդիսավոր օրինականացրեց նաեվ Հայ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքը, ամրապնդեց ու պաշտպանեց սովետական ազատ ու անկախ Հայկական պետականությունը, որ հավասարազոր ու լիիրավ անդամակիցն է սովետական հզոր եղբայրակցության մեծ ընտանիքի:

Շնորհիվ ազատաբեր Հոկտեմբերյան Ռեվոլուցիայի, անձնվեր օգնության ամբ Ռուսական մեծ ու մարդասեր ժողովրդի եվ սովետական այլ ազգերի եղբայրական աջակցության ամբ, համատարած ավերակներից ու զերեզմաններից գլուխ բարձրացրեց եվ վերակենդանացավ երբեմնի նահատակ, իսկ ներկայիս արդեն իսկ ազատ ու կորովի Հայ ժողովուրդը՝ ինքնիշխան տերը իր ազգային պետության, ծավալուն եվ ծաղկյալ ժողովրդական տնտեսության եվ փարթամ ու հոգեզմայլ ազգային մշակույթով:

Անցյալում այնքան անզոր, անկազմակերպ, աղքատիկ Հայ ժողովուրդը Սովետական դարաշրջանում իր նվիրական քնաշխարհում

եվ հարազատ պետության մեջ ամրության ծաղկեց ու զարգացավ, որ ընդունակ հանդիսացավ լայն բանալ Հայրենիքի հյուրընկալ դռները աշխարհն ի սիրուտ վտարանդի եղբայրների առաջ: Մեծահոգի հովանավորությամբ եվ անմիջական օգնությամբ Սովետական Մեծ Միության բարեխնամ կառավարության՝ սկիզբը դրվեց Հայ Սիրուտքի փրկարար եվ սրտառուչ Մեծ Հայրենադարձի, որ պատմական ազնիվ կոչումն ունի մեկ ընդ միշտ ազատագրել բաղդահալած ասպնջական եղբայրներին, թուրք վայրագության այդ անմեղ զոհերին, ծանր տարիների իրավազուրկ եվ անհայրենիք տարագրի անպատվարեր վիճակից: Շուրջ հարյուր հազար հայրենադարձ հարազատները արդեն իսկ ժամանել են եվ գալիս են Հայրենի Երկրի տուրք հողը՝ սովետական ընիկ եվ նախաբնակ եղբայրներին ձեռքն ու սիրտը տված — կոել-կոփելու երջանիկ կյանքի հիմքերը:

Հայրենադարձի շնորհիվ իրականություն է դառնում Հայ ժողովրդի յավազուն զավակների դարավոր իղեալը, որի հաղթանակի համար նրանք հերոսաբար պայքարեցին եվ ազատության մարտակոչը շրթունքներին ընկան Զեյթունի թե Սասնոյ հայրենական բարձունքներում, Վասպուրականի թե Կարնո հերոսամարտերում, Սարդարապատի թե Բաշ-Ապարանի հաղթական կռիվներում:

Հայ ժողովրդի այդ դարավոր իղեալն էր ազատամարտ միասնական ազգ, միասնական ազատ Հայաստանում:

Հայ հինավուրց ազգի դարավոր ու նվիրական իղեալի լիակատար ու ամբողջական կենսագործման հաղթական ուղին Հոկտեմբերյան Մեծ Ռեվոլուցիայի 30-ամյակի մեծագույն եվ վեհագույն կոթողներից էր:

Հնադարյան Ս. Էջմիածնի Մայր Տաճարի սրբազան կամարների տակ Մենք՝ Հայոց ալեզարդ Հայրապետս հանապազ ջերմեռանդ աղոթքներ ենք վերառաքում Ամենաարարչին, Սովետական մեր Մեծ Հայրենիքի Է՛լ ավելի ծաղկման, բարգավաճման ու հզորացման համար:

Թող հզոր ու անսասան մնա Սովետական Մեծ Միությունը:

Արեվշատություն ենք մաղթում Սովետական ազնիվ եվ իմաստուն կառավարության ղեկավարներին:

Իսկ Ձեզ, Գեներալիսիմուս Ստալին, մարդկության բարեկամիդ եվ Սովետական Մեծ Եղբայրակցության հանճարեղ Առաջնորդիդ ցանկանում ենք երկար ու երջանիկ կյանք եվ հաղթական ավարտ Ձեր գործին:

ԳԵՎՈՐԳ Զ

ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

6 նոյեմբեր 1947 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ



Սրտիս խորքում մի անհուն տենչ,
Ամուր գրկած ես պիտի գամ,
Նոր օրերիդ խոհով անկեղծ,
Հոգիս լցված ես պիտի գամ:

Պիտի սեղմեմ կարոտագին,
Ու համբուրեմ հողդ անգին.
Եվ կառուցման քո մեծ ելքի
Շնչով արբած ես պիտի գամ:

ԱՐՇ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Թեհրան)